իսկոյն ձգեալ յանձնէն զզգեստ[1]), ցուցանէ զամենայն վէրս անձինն։ Ասէ Թագաւորն. Զիա՞րդ ոչ եկիր յորժամ կոչեցի զքեզ. և նա ասէ. Յետոյ գիր մի ևս եկ թէ Մի՛ եկեսցես։ Եւ այսպէս բանիւք ելեալ յարքայէ գնայր ի տեղի իւր։ Զայս լուեալ վէզիրին առաւել մախայր, և այժմ կոչեաց զափուտան անունով և եմոյծ առ Թագաւորն՝ իբր ինքն անմեղ գոլով, և Թագաւորն խօսի առ Հիւսէինն սակաւ։ Եւ ամենայն քաղաքս յանցս ճանապարհին կանգնեալ կային մինչ ի գրունս կայսեր և լային զնա թէ մի՛ սպանցի գուցէ, զի գիտէին այր անկեղծ և ստոյգ[2]) ըստ իւրեանց դենին և սուրբ, և զքաջութիւն նորա պատմէին։ Եւ ևս ամենայն զօրք օճախին ոչ կամէին, այլ զվէզիրն անարգէին։ Եւ գիտէր չարհանճարն եւ յոյժ տանջեցաւ աւուրքս՝ թէ ո՛րպէս սպանցէ զնա եւ զի՛նչ պատճառաւ. բայց մեծամեծքն օճախին ընդ նմա գոլով՝ արար որպէս և կամեցաւ։ Կալաւ ի տուն արքայի օր մի եւ տեսանէ՝ թէ զի՛նչ լսիցէ, եւ ապայ ի Բերդն Եօթանց, եւ Կիրակի առաքէ զդրան պահպանապետ արքայի, որ արար խեղդամահ, եւ անդ ի բերդն Թաղեցաւ։ Եւ յայնժամ ել վէզիրն ի զօր եւ եկն ի Ղատրըղայ իլմանն եւ անդ Ե արս կախել ետ ի ծառոցն եւ յայլ սահմանս քաղաքիս ընդ որ անցանէրն։ Եւ ոչ գիտաց ոք՝ թէ զի՛նչ էին[3]) սպանեալքն. ոմանք չինկէն ասացին եւ այլք՝ յապստամբացն էին բերեալք ի դրուց ի տեսիլ ռամկաց, յերկիւղ զինքն չկամեցողաց կամ բամբասողաց եւ զՀիւսէինն լացողաց։ Եւ զորդին Հիւսէինի եհան ի քաղաքէս, որ էր պահպանապետ դրան արքայի եւ փառաւոր յաչս նորա, յարտաքս աքսորեաց եւ զՕմէր քէհեա նորին արգիլէր եւ համար պահանջէր, եւ բազում ինչս առնոյր

1) զգեստ. 2) ստուգ. 3) էր.